



**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ  
ՆԱԽՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՎԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.  
ՍԱՔՈՒՆՑԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**7-Ա**

ք. Երևան

03 մայիսի 2013թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Է. Բաբայան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի, «Վելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի դիմումի հիման վրա ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը պարզելու վերաբերյալ 09.04.2013թ. թիվ 5-Ա որոշմամբ Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի արդյունքում

***ՈՐՈՇՈՒՄ Է.***

**Հաստատել «Վելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն կից հավելվածի:**

Սույն որոշումը բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն կայացվելուց հետո մեկամսյա ժամկետում:

Հանձնաժողովի նախագահ  Է. Բաբայան

## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### **ՀԵՆՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Է. Բաբայան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանի կողմից էթիկայի կանոնների խախտման և նրան կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

#### **1. Դիմումի առարկան**

1. Դիմողը իր 13.03.2013թ. Ե/2013-13.03/144 դիմումում նշում է, որ 2013թ. փետրվարի 21-ին «Հետք օնլայն» էլեկտրոնային էջում հրապարակել է «Դա մեր առաջնորդի պարտությունը չէր, դա մեր ժողովրդի անգիտակից լինելն էր. Վանաձորի քաղաքապետ» վերնագրով հոդվածը, ըստ որի «Վանաձորի քաղաքապետ ՀՀԿ-ական Սամվել Դարբինյանը, պարզաբանելով հանրապետության երրորդ քաղաքում ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսյանի պարտությունը, նշել է. «Դա մեր առաջնորդի պարտությունը չէր, դա մեր ժողովրդի անգիտակից լինելն էր, որ ժողովուրդը ինքը չի հասկանում՝ ինչ է անում»: Ըստ Դիմողի՝ հոդվածագրի հարցին միգուցե ՀՀԿ տեղական կառույցներն են բացթողումներ ունեցել նախընտրական քարոզչության ընթացքում և քվեարկության օրը, Վանաձոր համայնքի ղեկավարը պատասխանել է. «Չէ, ամեն ինչ նորմալ է եղել, պարզապես ժողովուրդը չի հասկանում, էլի, ինքն ինչ պիտի անի, որ ավելի լավ կյանքում հայտնվի: Անընդհատ ուզում է Օ-ից սկսի, անընդհատ Օ-ից սկսելով՝ միշտ գալիս է հասնում է մինչև +1»:

2. Դիմողը, վկայակոչելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, եզրակացնում է, որ օրենքի գործողությունը

տարածվում է համայնքի ղեկավարի պաշտոն գրադեցնող անձանց վրա, քանի որ համայնքի ղեկավարների պաշտոնները համարվում են քաղաքական պաշտոններ:

3. Դիմողը գտնում է, որ «...Վանաձորի քաղաքապետը իր «Հետք օնլայն» էլեկտրոնային կայք էջում տրված հարցազրույցով այն համայնքի բնակիչներին, որոնք իրեն ընտրել են որպես համայնքի ղեկավար, իրենց ընտրությամբ լիազորել են համայնքի բնակիչների անունից հանդես գալու և իրենց շահերը ներկայացնելու պարտականությամբ անվանում է «անգիտակից» և նշում է, որ «...Ժողովուրդը չի հասկանում, էլի, ինքն ինչ պիտի անի, որ ավելի լավ կյանքում հայտնվի»:

4. Դիմողի կարծիքով համայնքի ղեկավարի կողմից նման արտահայտություններ օգտագործելը նախ խախտում է վերը վկայակոչված իրավական նորմերի դրույթները, ինչպես նաև վիրավորում է այն ժողովրդի արժանապատվությունը, որն իրեն ընտրել է որպես ղեկավար և օժտել մի շարք լիազորություններով:

5. Դիմողը պնդում է, որ համայնքի ղեկավարը իր գործողություններով չի հարգել հանրության բարոյական նորմերը, դրսևորել է իր պաշտոնին ոչ վայել վարքագիծ և անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել համայնքի բնակիչների նկատմամբ:

6. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը պահանջում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին ենթարկել կարգապահական տույժի:

## **2. Վարույթի հարուցումը**

7. Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը 2013 թվականի ապրիլի 9-ի 05-Ա որոշմամբ վարույթ է հարուցել Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի նկատմամբ՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումի հիման վրա:

8. Հանձնաժողովը 2013 թվականի ապրիլի 12-ի Ե-140 գրությամբ Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանին տեղեկացրել է հարուցված վարույթի վերաբերյալ և առաջարկել նշված գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել իր առարկությունները և բացատրությունները դիմումում ներկայացված հարցերի վերաբերյալ:

9. Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հանձնաժողովը էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ կարող է վարույթ հարուցել երեք դեպքերում՝ 1) որևէ անձի դիմումի

հիման վրա, 2) իր նախաձեռնությամբ, և 3) բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ իր կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը ստուգելու հարցով:

10. Հաշվի առնելով, որ վարույթի հարուցման համար հիմք է հանդիսացել հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումը՝ Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում նախ պարզաբանել Հանձնաժողովում էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշ առանձնահատկություններ:

11. Ինչպես վերը նշվեց՝ Հանձնաժողովի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար օրենսդիրը նախատեսել է երեք դեպք: Դրանցից երրորդը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի հիման վրա վարույթ հարուցելուն՝ իր կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը ստուգելու դեպքում, գործ ունենք մի իրավիճակի հետ երբ բարձրաստիճան պաշտոնատար անձը ինքն է նախաձեռնում իր իսկ կողմից էթիկայի կանոնների հնարավոր խախտման հանգամանքը ստուգելու հարցը: Նման դեպքերում ակնհայտ է, որ Հանձնաժողովը կարող է հարցը ուսումնասիրության առարկա դարձնել միայն տվյալ բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի առկայության դեպքում:

12. Երկրորդ դեպքում օրենքը սահմանում է, որ Հանձնաժողովը կարող է էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցել սեփական նախաձեռնությամբ: Այս առումով Հանձնաժողովը գտնում է, որ օրենսդիրը նշված դրույթով Հանձնաժողովի համար սահմանել է հստակ հայեցողություն առանց որևէ անձի դիմումի առկայության, սեփական նախաձեռնությամբ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար:

13. Նշված հայեցողության սահմանները հստակեցնելու համար անհրաժեշտ է նշել, որ միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ որևէ մարմնին, լինի դա ազգային կամ միջազգային դատարան կամ հանձնաժողով, դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակի սահմանափակում գոյություն չունի, այսինքն՝ յուրաքանչյուր անձ կարող է դիմել, ապա տվյալ մարմնի հայեցողությամբ վարույթ սկսելու (*proprio motu investigation*) իրավասությունը դիտվում է որպես բացառիկ դեպքերում օգտագործվող գործիք: Նման գործիքը օգտագործվում է կամ հասարակական լայն շերտերին վերաբերող համակարգային բնույթ ունեցող հարցերի քննարկման համար, կամ այն դեպքերում, երբ անձը կամ անձանց խումբը, ում իրավունքները անմիջականորեն խախտվել են տվյալ գործողության արդյունքում, որևէ օբյեկտիվ պատճառով չեն կարող անձամբ դիմել տվյալ մարմնին (անձի մահվան, հոգեկան հիվանդության, անչափահաս լինելու պատճառով և այլն):

14. Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ վարույթ հարուցելու հարցի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Հանձնաժողովի նախաձեռնությամբ վարույթ հարուցելու հայեցողությունը անհրաժեշտ է դիտել որպես բացառիկ դեպքերում օգտագործվող միջոց: Բացառիկ դեպք կարող է համարվել համակարգային բնույթ ունեցող էթիկայի կանոնների խախտումները, միանգամից մեծ թվով մարդկանց նկատմամբ էթիկայի կանոնների խախտումներ թույլ տալու դեպքերը, կամ այն դեպքերը, երբ անձը օբյեկտիվ պատճառներից ելնելով ինքը չի կարող անձամբ դիմել Հանձնաժողովին:

15. Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու օրենքով նախատեսված առաջին դեպքին՝ որևէ անձի դիմումի հիման վրա վարույթ հարուցելուն, ապա Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով էթիկայի կանոնների ընդհանուր համակարգի առանձնահատկությունները և նրբությունները կոնկրետ անձի կամ անձանց խմբի նկատմամբ էթիկայի կանոնների խախտման հարցեր քննարկելու համար տվյալ անձի կամ անձանց խմբի դիմումի հիման վրա վարույթ հարուցելը պետք է դառնա էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հարցերի քննարկման հիմնական միջոցը:

16. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները: Միջազգային փորձը և ընդունված պրակտիկան ցույց են տալիս, որ էթիկայի կանոններին համապարփակ և բոլոր հնարավոր իրավիճակները ներառող մեկնաբանություն գոյություն չունի: Էթիկայի կանոնների ցանկացած կոնկրետ դեպք ուսումնասիրվում է տվյալ դեպքին առնչվող փաստերի համատեքստում և ընդունվում է որոշում, որը կարող է կիրառելի չլինել նույնիսկ փաստական հանգամանքներով շատ մոտ այլ դեպքերի նկատմամբ:

17. Ակնհայտ է, որ նման դեպքերի վերաբերյալ անհնար է օբյեկտիվ կարծիք կազմել առանց հաշվի առնելու տվյալ դրվագի բոլոր փաստական հանգամանքները, տեղի ունեցած դեպքի կամ ասված խոսքի համատեքստը, երբեմն նաև տվյալ իրավիճակում ներգրավված անձանց անձնական հարաբերությունները, տարիքը, սեռը և այլն: Որևէ արտահայտություն կամ ժեստ, որևէ կոնկրետ անձի կամ անձանց խմբի նկատմամբ անհարգալից վերաբերմունք որակելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել տվյալ անձի կամ անձանց խմբի սեփական ընկալումը, նրանց միջև առկա անձնական հարաբերությունները կամ այլ հանգամանքները, որոնց առկայության կամ բացակայության պայմաններում դրանք կարող են նաև չընկալվել որպես անհարգալից վերաբերմունք:

18. Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտումներին, որոնք ուղղված են կոնկրետ անձի կամ անձանց խմբի, Հանձնաժողովը չի կարող վարույթ հարուցել քանի դեռ չի ստացել կոնկրետ անձից կամ անձանց խմբից կոնկրետ դեպքին վերաբերող դիմում: Դիմումում պետք է նշված լինի դիմումի համար հիմք հանդիսացող կոնկրետ իրավիճակը, դիմողի առնչությունը տվյալ դեպքին, այն դրույթը, որը դիմողի կարծիքով խախտել է կոնկրետ բարձրաստիճան պաշտոնատար անձը, ինչպես նաև դիմումին պետք է կցված լինի ձեռքի տակ եղած և դիմումը հիմնավորող ցանկացած նյութ:

19. Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումը անհրաժեշտ է դիտարկել որպես վերը նշված պայմաններին համապատասխանող: Այն է՝ դիմումը վերաբերում է կոնկրետ բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կոնկրետ անձանց խմբի նկատմամբ թույլ տրված էթիկայի կանոնների խախտման հարցը քննարկելուն և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը ակնհայտորեն տվյալ կոնկրետ անձանց խմբի մեջ է:

### **3. Իրավական հիմքերը**

20. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի համակարգ է, որոնք միտված են ապահովելու հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ:

21. Հանձնաժողովը գտնում է, որ սույն վարույթի հիմք հանդիսացած դիմումը անհրաժեշտ է քննարկել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված «հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս» էթիկայի կանոնի տեսանկյունից:

### **4. Վանաձորի քաղաքապետի բացատրությունները**

22. 2013 թվականի ապրիլի 19-ի թիվ 061N2104 գրությամբ Հանձնաժողովը ստացել է Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանի պարզաբանումները, որտեղ քաղաքապետը նշում է, որ 2013 թվականի

փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրությունների Վանաձոր քաղաքում արձանագրված արդյունքների մասին ԶԼՄ-ների բազմաթիվ ներկայացուցիչների կողմից առ այսօր իրեն տարբեր ձևերով (բանավոր և հեռախոսազանգերով) հարցեր են ուղղվում:

23. Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Վանաձորի քաղաքապետը նշում է, որ լրագրող Ա. Թորոսյանի հեռախոսով տրված նմանատիպ հարցին պատասխանելիս ոչ տեղին օգտագործել է «անգիտակից» բառը՝ բնավ մտադրություն չունենալով վիրավորել որևէ մեկի, առավել ևս հանրության մի մասի ինքնասիրությունը: Քաղաքապետը նշում է, որ ինքը փորձել է ասել այն միտքը, որ միգուցե ընտրություն կատարելուց առաջ ոչ բոլորն են մինչև վերջ գիտակցել կամ ընկալել գործող նախագահի նախընտրական ծրագրերը և գնահատել նրա կատարած աշխատանքը:

24. Վանաձորի քաղաքապետը նաև նշում է, որ տեսնելով, որ իր օգտագործած բառը առիթ է հանդիսացել տարաբնույթ շահարկումների, հարգելով բոլոր վանաձորցիներին, սիրելով Վանաձորը և գիտակցելով հինգ անգամ վանաձորցիների կողմից ընտրված քաղաքապետի իր մեծ պատասխանատվությունը՝ անմիջապես (22.02.2013թ) հրապարակային պարզաբանումներով հայցել է նրանց ներողամտությունը, ում ինքնասիրությունը վիրավորել է այդ բառը ոչ տեղին օգտագործելով:

25. Քաղաքապետը իր պարզաբանումներին կցել է նաև Վանաձորի քաղաքապետարանի պաշտոնական կայքում հրապարակված Times.am էլեկտրոնային լրատվական կայքին տրված հարցազրույցի լուսապատճենը: Հարցազրույցի ընթացքում լրագրողի այն հացին, թե «մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներ մեջբերում են արել ձեր հեռախոսազրույցից, ուր դուք ասել եք հետևյալը. «Դա մեր առաջնորդի պարտությունը չէր, դա մեր ժողովրդի անգիտակից լինելն էր», ինչպե՞ս կմեկնաբանեք.» Վանաձորի քաղաքապետը մեկնաբանել է.

*«Որոշ լրատվամիջոցներ փորձել են շահարկել և խեղաթյուրել կարճապես խոսակցության ընթացքում հնչած մտքերը: Որպես քրիստոնյա, շահարկումը թողնում են դրանց հեղինակների խղճի վրա: Հինգ անգամ ժողովրդի վստահությունը շահած քաղաքապետը ամենից լավ գիտի ինչ բարձր գիտակցական մակարդակ ունի իր ժողովուրդը: Գուցե և մեր մեղքն է, որ քարոզչական ճանապարհով չենք կարողացել յուրաքանչյուր վանաձորցու գիտակցությանը հասցել վերջին հինգ տարում կատարված աշխատանքները և այն հեռանկարները, որոնք սպասում են ոչ միայն երկրի բնակչությանը, այլ նաև Վանաձորին և վանաձորցիներին: Գուցե և այս հարցում իրապես թերացել ենք:*



Ես սա եմ նկատի ունեցել, թեև հնարավոր է, որ ոչ ճիշտ բառ եմ օգտագործել: Ես երբեք իմ համաքաղաքացիներին անգիտակից չեմ համարել և չեմ կարող համարել: Հայցում եմ այն համաքաղաքացիներին ներողամտությունը, որոնք անբարեխիղճ ու անպատասխանատու անձերի կողմից իմ խոսքերի անտեղի և միտումնավոր խեղաթյուրման արդյունքում թյուրիմացության մեջ են ընկել:»<sup>1</sup>

## **5. Հանձնաժողովի եզրակացությունը**

26. Հանձնաժողովը՝ անդրադառնալով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումում բարձրացված հարցերին փաստում է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովը չունի որևէ բարձրաստիճան պաշտոնատար անձի կարգապահական տույժի ենթարկելու իրավասություն:

27. Ինչ վերաբերում է Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանի կողմից բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների խախտման հարցին՝ Հանձնաժողովը գտնում է, որ «անգիտակից» բառի օգտագործումը հասարակության մի հատվածի վերաբերյալ, ինչպես նաև նույնիսկ մեկ անձի նկատմամբ, կարող է դիտվել որպես անհարգալից վերաբերմունքի դրսևորում այն անձանց նկատմամբ, որոնց հետ բարձրաստիճան պաշտոնատար անձը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս: Մյուս կողմից, Հանձնաժողովը հաշվի է առնում նաև տեղի ունեցած դեպքի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի բացատրությունները և նրա գործողությունները ինչպես դեպքը տեղի ունենալու ժամանակ, այնպես էլ դրանից անմիջապես հետո:

28. Այս առումով Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Վանաձորի քաղաքապետը, ինչպես դեպքից անմիջապես հետո տրված հարցազրույցում, այնպես էլ Հանձնաժողովին ներկայացված բացատրություններում ընդունել է, որ ոչ տեղին է օգտագործել «անգիտակից» բառը, նպատակ չի ունեցել վիրավորելու որևէ մեկին և փորձել է հայցել բոլոր այն անձանց ներողամտությունը, ում ակամայից վիրավորել է իր ոչ տեղին օգտագործված բառի պատճառով:

29. Հանձնաժողովը արձանագրում է, որ էթիկայի կանոնների արդյունավետ համակարգի ձևավորումը առաջին հերթին հիմնված պետք է լինի բարձրաստիճան պաշտոնատար անձանց այն գիտակցման վրա, որ իրենց լիազորությունները իրականացնելիս նրանք պարտավոր են հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, ում հետ շփվում են:

<sup>1</sup><http://vanadzor.am/am/news/597--l-r>

Եվ հենց այս պարտավորության գիտակցումն է, որ կհանգեցնի մի այնպիսի իրավիճակի, երբ պաշտոնատար անձը կստանձնի պատասխանատվություն և ներողություն կհայցի որևէ գործողության կամ արտահայտության համար, որով վիրավորել է որևէ անձի:

30. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնների համակարգի կիրարկումը ոչ միայն ուղղված է էթիկայի կանոնների խախտումների իսպառ բացառմանը, (ինչը գործնականում անհնարին է) կամ պատիժներ կիրառելուն, այլ նաև ուղղված է բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատշաճ վարքագծի ձևավորմանը այն դեպքերում, երբ նման խախտումներ այնուամենայնիվ տեղի են ունեցել: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հանրության նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակույթի զարգացման համար խախտման փաստի արձանագրումից զատ կարևոր է նաև, թե բարձրաստիճան պաշտոնատար անձի ինչ գործողություններ են հետևում խախտման փաստի արձանագրմանը:

31. Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հարգալից վերաբերմունք ցուցաբերելը նախ և առաջ նշանակում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձը ցանկացած հրապարակային միտք արտահայտելուց առաջ պետք է պատասխանատվությամբ կշռի իր ցանկացած բառ և համոզվի, որ այն վիրավորական չի հնչի որևէ անձի կամ անձանց խմբի համար:

32. *Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը եզրակացնում է.*

***Ելնելով այն հանգամանքից, որ Վանաձորի քաղաքապետ Ս.Դարբինյանը ընդունել է “անգիտակից” բառը ոչ տեղին օգտագործելու փաստը և, համաձայն իր բացատրությունների, նպատակ չի ունեցել վիրավորելու որևէ մեկին ու նշված հարցազրույցից անմիջապես հետո փորձել է հրապարակային ներողություն հայցել բոլոր այն մարդկանցից, ում վիրավորել է՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանի գործողությունների շղթան գտնվում է էթիկայի կանոնների շրջանակում:***

*Հանձնաժողովը առաջարկում է.*

***Վանաձորի քաղաքապետին՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումում բարձրացված էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հարցը փակված համարելու համար՝ հստակ և աներկբա տեքստով հրապարակային ներողություն հայցել բոլոր այն անձանցից, ում վիրավորել է իր արտահայտությամբ և տեղադրել այդ տեքստը Վանաձորի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում:***